

Գրիգոր սոսկ անուամբ վարդապետ . . . որ կոչեցեալ վերահետոյ մայրաքաղաքին Կեսարիոյ» (Տաշեան, Նոյն, էջ 732):

Միայն կէտ մը կայ որ կ'արժէ լուսաբանել: Այս թուղթին համար ծանօթութեան մը մէջ ըսուած է թէ «գրեցաւ միսրաւական նախակա ի քվակակնիս Հայոց ՌԾԶ (= 1607) հոռի սևսոյ ի Ժ եւ ըս Հոռուայեցոցն ի նոյեմբեր սևսոյ ի Իթ, յաւուր շարարու յիկնեռորդ ժառու ի քաղաքն Կեսարիս, ի դունն սրբոյն Սարգսի Զորավարին», ինչ որ սխալ պէտք է ըլլայ, վասնզի Գրիգոր վրդ. Կեսարացի 1607 Հոկտ. 25ին եթէ Կ. Պոլիս էր, ինչպէս կը հաստատէ Գարանաղբի, (տե՛ս էջ, 124), անկարելի է որ 29 նոյեմբերի օրը Կեսարիա դարձած ըլլար կրկին:

Հաւանական է ընդօրինակութեան թըլականը համարել այս թուականը:

1607ին Գրիգոր Կեսարացի Կ. Պոլիս էր և հոն նոյն իսկ պատրիարք դարձած անշուշտ, տեղացիներու ստիպումով:

Ինքն որ Կ. Պոլիս գացած էր միայն խաղարարութեան համար, իր վրայ կը պահէր Կեսարիոյ առաջնորդութիւնը, ուր ունէր օգնական մը կամ ժամանակին սովորութեան համաձայն աթոռակից մը, այսինքն մէկը՝ որ հաւասար իրաւունքով կը վարէր առաջնորդական պաշտօնը: